Հետաքննող լրագրողներ

1/3 Բյուզանդի փ., 8-րդ հարկ, Երևան-0010, Հայաստան
www.hetq.am
info@hetq.am | hetq@hetq.am
(+374) 10 563363 | 10 580219

Վայոց ձորի մարզպետ
Արարատ Գրիգորյանին

«Հետք» ինտերնետային թերթի լրագրող
Տրդատ Մուշեղյանից

(էլ. փոստ՝ trdat.musheghyan@hetq.am
հեռ.՝ 098-488-228)

Հարցում

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ հայտնել տեղեկություններ հետևյալի մասին.

«Հետքը» հոդվածաշար է պատրաստում Հայաստանի կեղտաջրերի մաքրման կայանների մասին: Հոդվածների միջոցով ցույց ենք տալու մաքրման կայանների և դրանց բացակայության ազդեցությունը շրջակա միջավայրի, հանրային առողջության և կենսական այլ հարցերի վրա: Ուստի խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին.

1. Վայոց ձորի մարզի ո՞ր համայնքները և բնակավայրերն ունեն կոյուղի, որոնք՝ ոչ:

2. Որտե՞ղ են թափվում Վայոց ձորի մարզի բնակավայրերի կեղտաջրերը (խնդրում եմ տեղեկատվությունը տրամադրել առանձին-առանձին՝ ըստ բնակավայրերի):

3. Վայոց ձորի մարզի ո՞ր համայնքներում է երբևէ գործել կամ այժմ գործում կեղտաջրերի մաքրման կայան:

Խնդրում եմ վերը նշվածի վերաբերյալ տրամադրել մանրամասն տեղեկություններ, որպեսզի տվյալները համադրելի լինեն մյուս մարզերի տրամադրած տվյալների հետ:

Հարգանքով՝

«Հետք» թերթի լրագրող Տրդատ Մուշեղյան

Ստացվել է՝ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
Մուտքի թիվ 1096
07.03.2023թ.

06.03.2023